# ՀՌՉԱԿ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԶՕՐ ՄԵԾԱՓԱՌՈՒԹԵԱՆ

9(47.925)
Հ 92

ԻՆՔՆԱԿԱԼԻ ԵՒ ԿԱՅՍԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ

## ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ԱՌԱՋՆՈՅ

ԱՌ ԱԶԳՍ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՎՐԱՍՏԱՆ։

60

Ի ՏՓԽԻՍ։

Ի Տպարանի Ուսումնարանի Հայոց ընծայելոյ յԱզնուա-
կան Գէորգայ Երեմեան Արծրունւոյ։

1827 ——— ՌՄՀԶ։

Բարձրասցի Թագաւոր մեր՝ յըշտեմարանս և 'ի գանձոյս մեր։

Երգ Երգոց. Գլ. Է. 14.

## БОЖІЕЮ МИЛОСТІЮ.

# МЫ НИКОЛАЙ ПЕРВЫЙ, ИМПЕРАТОРЪ и САМОДЕРЖЕЦЪ ВСЕРОССІЙСКІЙ.

И прочая, и прочая, и прочая.

Преосвященному Нерсесу, Епархіальному Архіепископу всѣхъ Армянъ, обитающихъ въ Грузіи.

Нарушеніе мира Персіянами и внезапное ихъ вторженіе въ НАШИ Области, подали случай Армянскому Народу, въ Грузіи обитающему, явить на опытѣ свое усердіе и нелицемѣрную къ НАМЪ преданность. Въ сихъ обстоятельствахъ онъ доказалъ, что умѣетъ цѣнить благотворныя о немъ старанія Правительства, и что видитъ ясно превосходство настоящаго жребія своего предъ участію столь многихъ единовѣрцовъ, по инымъ странамъ разсѣянныхъ. Поручаемъ Вамъ изъявить всѣмъ Армянамъ, въ Духовномъ Вашемъ управленіи находящимся, совершенное благоволеніе НАШЕ и увѣрить ихъ ИМПЕРАТОРСКИМЪ НАШИМЪ словомъ въ продолженіи къ нимъ особенныхъ НАШИХЪ милостей. Доколѣ пребудетъ не поколебима вѣрность народа Вашего, обрѣтшаго надежное убѣжище подъ сѣнію Россійскаго Престола, МЫ вмѣнимъ СЕБѢ въ обязанность неусыпно пещись о его счастіи и успокоеніи.

Относя похвальное поведеніе Духовной паствы Вашей и къ дѣйствію пастырскихъ Вашихъ увѣщаній, МЫ изъявляемъ Вамъ МОНАРШУЮ НАШУ признательность и пребываемъ ИМПЕРАТОРСКОЮ НАШЕЮ милостію къ Вамъ благосклонны. С. П. Бургъ. Февраля 2-го дня, 1827-го, Государствованія же НАШЕГО втораго года.

На подлинномъ подписано собственною ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА рукою тако:

**НИКОЛАЙ.**

# ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
# ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱՋԻՆ
## ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ
### ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ·

և այլոց, և այլոց, և այլոց·

Արքաղան Ներսիսի Վիճակաւոր Առաջնորդի ամ Հայոց բնակեցելոց 'ի Վրաստան։

Բռնակալն Պարսից զխաղաղութիւն և յանկարծ յարձակել նոյ 'ի սահմանս ՄԵՐ առիթ եղաւ ազգի Հայոց բնակելոց 'ի Վրաստան յայտնել նախ զջերմեռանդութիւն իւր և զանկեղծաւոր անձնուիրութիւն ՄԵԶ։ Յայտնիք դիպուածս եղէն նմա՝ թէ զիարդ զինի բարեբար հոգացողութեամբ կառավարութեան վասն իւր. և թէ տեսանէ պատրաստս ընտրական վիճակ իւր գերազանցեալ քան զվիճակ բազմութեան հատուածոց իւրոց, որք սփռեալ կան յայլ և այլ կողմանս։ Յանձն առնեմք Ձեզ յայտնել ամենայն Հայոց եղելոց ընդ ձերով հովուր կառավարութեամբ զկատարեալ բարեհաճութիւն ՄԵՐ, և հաւաստիացուցանել զնոսա ԿԱՅՍԵՐԱԿԱՆ բանիւ ՄԵՐՈՎ, թէ յարատևել ունին առ նա յատուկ ողորմութիւնք ՄԵՐ։ Յուշակ ժամանակ տևեսցէ անյողդողդ հաւատարմութիւն ազգի ձերոյ՝ որ զտեալն է զյուսալի տեղի ապաւինի ի հովանեաւ Աթոռոյ Ռուսաց, հարկ համարեսցուք ՄԵԶ հոգ տանել անքուն վասն բարեբաղդութեան նորա և անդորրութեան։

Վերաբերելով զգումարի ընթացս հովուէր հօտի ձերոյ և առ ներգործութեան հովուական յորդորմանց ձերոց՝ ՄԵՔ յայտնեմք Ձեզ զԿԱՅՍԵՐԱԿԱՆ երախտագիտութիւն ՄԵՐ. և մնամք ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ողորմութեամբ ՄԵՐՈՎ բարեհաճ առ Ձեզ։ Սանկտ Պետրբուրգ. 2. փետրուարի. 1827. յերկրորդում ամի Թագաւորութեան ՄԵՐՈՅ·

Նախատիպն ստորագրեալ է սեփական ձեռամբ Նորին Կայսերական մեծութեան այսպէս·

ՆԻԿՈՂԱՅՈՍ·

# Պատուարժան Աւագ Երիցանց և Ժամօրհնող Քահանայից Հայոց ՚ի Թիֆլիզ և ՚ի Հաւլաբար

Գրեմ.

Աւետարանել ամենայն ժողովրդեան Հայոց, զի Օծեալն Աստուծոյ ամենողորմած ԻՆՔՆԱԿԱԼ ԿԱՅՍՐՆ ամենայն Ռուսաց ՆԻԿՕԼԱՅ Պաւլովիչ ծանուցեալ զչափ կատարեալ ջերմեռանդութեան և անկեղծաւոր հպատակութեան հաւատարմութեան ազգի Հայոց առ տէրութիւն իւր, և զչափ ազգական խնամութեանց նոցին առ իւրեանց առանձնական օգուտ, ստորագրութեամբ բարձր Արքայական Ձեռաց ԻՒՐՈՅ արձանացուցանել զայնպիսի վկայութիւն ԻՒՐ վասն սիրելի ժողովրդեան ամենապատուելի հաւատարմութեան լուսաւոր Ազգաց սրբոյ Լուսաւորչին միաձայնեցելոց մերում Հաւատութեան, յանձն առնէ մեզ յայտնել ամենայն ազգի Հայոց զԿԱՅՍԵՐԱԿԱՆ բարեհաճութիւն ԻՒՐ առ այնպիսի բանաւորութեամբ պատշաճեալ ջատագովելի դրութիւն իւրեանց, և հաւաստի առնել զամենեսեան վասն ԿԱՅՍԵՐԱԿԱՆ բանիւք ԻՒՐՈՅ, թէ յատկական ողորմութիւն ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ առ ազգն Հայոց ունի մնալ անպակաս, և որչափ ժամանակ երկարելոց իցէ այնպիսի անփոփոխելի հաւատարմութիւն ազգի Հայոց առ տէրութիւն Ռուսաց, ԻՆՔՆ ևս հարկ համարի ԻՆՔԵԱՆ հոգ տանել անքուն խնամակալութեամբ վասն երջանկութեան և անդորրութեան հաւատարմութեան նոցին, և ցուցանել զերախտագիտութիւն ԻՒՐ.

Զայս ԿԱՅՍԵՐԱԿԱՆ մեծ ողորմութեան ամենայարգ Գիր յուսալից՝ բարեբախտ գտանիմք ընթեռնուլ նախ այսօր ՚ի 22. ամսոյս յերեկոյեան ժամուն ՚ի լուր հաւատարմութեան ամենայն ժողովրդեան եղելոց ՚ի բարեմլիձակ քաղաքէ աստ ՚ի Թիֆլիզ, և լսել և գոհանալ զԱստուծոյ ՚ի վերայ այսպիսի շնորհաց անճառ մարդասիրութեանց նորա առ ազգս Հայոց, որով գտանիմք արժանաւորեալ և բարձրագոյն մարդասիրութեանց և ամենամեծ հովանաւորութեանց ԻՆՔՆԱԿԱԼԻ և ԿԱՅՍԵՐ ամ՟ Ռուսաց.

1827. Փետրվարի. 22.
Ի Թիֆլիզ.

Արքեպիսկոպոս Հայոց
Աշտարակեցի Ներսէս.

# ԲԱ՛Ն

Ասացեալ ՚ի հանդիսի ընթերցմանութեան ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Գրոյն յե-րեկոյեան ժամուն ՚ի 22. փետրվարի. 1827. ամի. ՚ի Ներսիսէ վեհաձակաւոր Արք-եպիսկոպոսէ Հայոց ՚ի Վրաստան.

Զգօնութիւն գործեցէք զանձն ձեր. եւ առ Աստուած պատուասցի. եւ ՚ի մէջ ժողովր-դեան ձերոյ փառաւորեսցի. եւ յեկեղեցւոջ Եայցելոյն Եայցէ զԷերան ձեր. եւ տաճարէ երե-ւոյ զօրութեան Նորա պարծեսցի. Մերով. ԺԲ. 1. 2.

Ցնծացէք, ցնծացէք ժառանգաւորք արարչական ան-պատում ողորմութեց հաստատեցելոց յակերս եւ յարիւնս ձեր։ Ցնծացէք, եւ որպէս լերուք կանգնեցեալք եւ արմատացեալք ՚ի բարութեան բարերարն Հաստչին ձերոյ Ա՛Յ։ Ցնծացէք եւ խայտասցեն սիրտք ձեր ՚ի մէջ անկողոպտելի գանձուցն բնու-թեանց առատացելոց ձերում միաբանութե։ Ցնծացէք եւ զուար-թասցին անձինք ձեր եւ հոգիք՝ որդիք դիւցազին Հայկայ պանծալի հսկայի։ Ցնծացէք, եւ լիապատար բերկրութե մա-տուցէք Տեառն Ա՛Յ ձերում զփառս եւ զպատիւ։ Մատուցէք Տեառն զփառս անուան նր եւ երկիրպագէք Տեառն ՚ի սրահ սրբութե նորա. եւ գոհացարուք զնմանէ զի քաղցր է, զի յաւի-տեան է ողորմութի նորա, որով եւ զանշիջելապէս ահա շնորհք բարի պարգեւաց նր փայլին այսօր յերեսս ձեր եւ պանծացու-ցանեն զպարծանս ձեր եւ ամ հասարակաց Հայկազանց՝ որք ը-ցրուս են տեղտեղերաց։

Զի՞նչ ոչ լցցին բերանք ձեր փառօք Ա՛Յ. զի՞նչ ոչ ՚ի բարձունս առ նա ամբարձեալ յառեսցին աչք ձեր. զի՞նչ ոչ առասան յուսոյ հաստատուն աղբի՝ յերկինս երկնից յաթո-ռոյ լուսամփ խնամակալի հաստեալ հաստատեալ, հաստա-տենիդ սերտեսցի անխզելի յափանմն։ Ո՛ւստի մեզ այս, զօ-րութիւն ՚ի տկարութե մերում. առատութիւն փառաց ՚ի-նուաստութեան մերում. եւ պարծանք մեծութե տէրական շնոր-հաց ՚ի խոնարհ հպատակութե մերում։ Ո՛ւստի մեզ՝ ուստի ար-դեօք, առ ՚ի մի՞նչ թէ յայլոց, եթէ ոչ ՚ի բարձրելոյն առանձ-

նա-

Նախան ձրի պարգևաց. որ 'ի բարձունս բնակեալ է, և զխո֊ նարհս տեսանէ յերկինս և յերկրի: Որ յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց: Որ տուանէ ողորմութ֊, և ոչ խնայէ ի բոց երկիւղածաց: Որ 'ի ձեռն իւր ունի զսիրտ Թագաւորաց, և հայեցուցանէ ընդ որ կամս և կամիցի:

Հապա՝ ժամէ արդ՝ հանդիսադիր մեզ և մեր Հայկազանց 'ի ձեռն տեսչութեանց երկնից: Այս է մեզ վայրկեան՝ յորում տեսանեմք աչօք լուսոյ բանից ԱԾաշունչ ասաց խնամածոյն՝ զորդիս Հայկազանց նախնի խելուք 'ի հանդէս մատուցեալ: Զգօնութիւն գովեսցէ զանձն իւր. և առ ԱԾ պատուեսցի. և 'ի մէջ ժողովրդեան իւրոյ փառաւորեսցի. և յեկեղեցիս բարձրելոյն բացցէ զբերան իւր. և առաջի երեսաց զօրութ֊ նորա պարծեսցի:

Այս է խնամոտուն իմանալ մեզ զարժանն մեր, ճանաչել մեզ զպարտաւորութն մեր Այ մերոյ, զպարտաւորութիւն մեր Օծելոյ նորա Թագաւորի մերոյ և Ինքնակալի ամ֊ Ռուսաց, զպարտաւորութն մեր անձանց և հայրենեաց և ամենից հա֊ սարակութեանց համազգեաց՝ անցելոց և ներկայից և յաւէտ եւ ապագայից:

Զարժանն մեր, զորմէ ընթեռնումք զգրեալն: Նա֊ այն խոստովանութիւն է, ճանաչել նէ յամենէ չնորհն.(1).

Զպարտաւորութիւն մեր Այ մերոյ, զի ոչ որդեգրեալք և անընտրողականօքն մեզ ըստ պատահմանց իմիք աշխարհիս ա֊ սորիկ տեսանեմք այսպէս վայելչացեալ այսօր ազգական արժա֊ նաւորութիւնք մեր, որք առ լցեալ բերկրութեամբ զսիրտս ա֊ րանց և կանանց բազմութեանց համախմբելոց 'ի Գաւիթ սր֊ բութ֊ Տաճարի նորա, արտայայտեն ակն յանդիման հասարա֊ կաց յերեսս մեծի և փոքու ամենեցուն մեր զնորադեղ հրա֊ շագեղ զուարթութիւն, այլ ներքնովքն և բնաւորականօքն նա֊ խախնամականն յատուկ պարգևօք շնորհեցելովք ազգի Հայոց առ 'ի նմանէ, յորմէ ամենայն տուրք բարիք և ամենայն պար֊ գևք կատարեալք:

Զպարտաւորութն մեր Այ մերոյ՝ որոյ ընծայարացն ար֊

(1) Իմաստ. է. 21.

գտոնք փառաւորեալ ՚ի մէջ ժողովրդեան իւրոյ զազգն մեր Հայոց, քանզի զբերան մեր ամենեցուն յեկեղեցիս բարձրելոյն, և պանծացուցանէ առաջի երեսաց զօրութեան Նորա զպարծանս զգօնութեանց և ընտրութեանց, մտերմութեանց և անկեղծաւոր հպատակութեանց. որոց զյարգն ամբարձեալ ՚ի թաթ առնչական կշռադատութեանց Աստուածապատիւ բարձրութեանդ՝ լուեալք ահաւասիկ ՚ի բարեվիճակ յայսմիկ յերեկոյեան ժամու ոչ ՚ի հաստահակաց ոմանց օդական ցնդական բանիւք միայն յունկնս ձերում բազմաժողով հանդիսի կեղակարծ իմն շողոքորթ ձայնարկութեամբ համբաւեալ, այլ ՚ի ՏԻԵԶԵՐԱԿԱԼ ԻՆՔՆԱԿԱԼԻ գրեալ և արձանացուցեալ. թէ ազգն Հայոց ոչ զլանայ յայտնել գործովք զխակական ջերմեռանդութիւն իւր և զանկեղծաւոր հպատակութիւն Տէրութեանց և Իշխանութեանց որոց հայցէ ՚ի հպատակութեան: Թէ ազգն Հայոց կարէ զանազանել և կարէ գիտել զգին բարերար հոգածութեանց նոցին. թէ ազգն Հայոց ունի զպարզ տեսողութիւն, և առաքինացեալ աւետարանական հանդերձութեամբ և երկիւղածութեամբ բազմաւ, կարէ յարգել զքանքար յուսոյ: Այլ որ սխրալին է՝ թէ ցորչափ ժամանակս աւելոց իցէ հաւատարմութիւն Հայոց անբեկանելի միատարր շարունակութեամբ՝ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ յատուկ ողորմութիւնք ՄԵՐ լինելոց են առ նոսա անպակաս. և հարկ համարեսցուք ՄԵԶ հոգ տանել անդստին վասն բարեբախտութեանց նոցա և անդորրութեանց:

Ա՛ղէ արդ՝ մատիցէ այժմ այր իւրաքանչիւր ՚ի մենջ ՚ի խորութենէ սրտի իւրոյ՝ և յանձին իւրում եղեալ իբրու առաջ ՚ի խորութեան անդ, տացէ զշնոր բարձրութեանց Աստուածային խնամակալութեանց ՚ի վերայ մեր և խորհութեանց պարտաւորութեանց մերոց նմին, զմտաւ ածեալ միանգամ թէ ազգն Հայոց շահի արդեօք զքանքար Աստուծոյ իւրոյ առատացելոյ ինքեան, եթէ քանքար նորա շահի զազգն: Այլ ես զդամ յանձն իմ, թէ քանքարն Աստուծոյ շահի մեզ զմի՛ և զմեզ իսկ երէկ և այսօր աստ և ընդ ամ տեղւոյ՝ և ոչ մեք զքանքարն: Այժմ իսկ և ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ շնորհ արդաւք

մէք քանքարաց Աստուածայնոց վերադիտելոց յազգն Հայոց նշանակեալ ինքեան գրաւական հաւատարիմ՝ 'ի մեզ, 'ի սոյն զկատարեալ բարեհաճութիւն ԻՒՐ առ ազգ մեր հիմնեալ՝ հաւատարմացուցանէ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ բանիւ ԻՒՐՈՎ, թէ յատուկ ողորմութիւնք ԻՒՐ լինելոց են առ նոսա անպակաս. և ըստ օրինակի Աստ՟ւ որ հաճեցաւ դնել առ Նոյեան զաղեղն իւր յամպս 'ի նշան հաշտութեան յաղագս յաւիտենից, 'ի վերայ յարատեւութեան անփոփոխելի պարզ հաւատարմութեան Հայկազանց դնէ Աստուածանման մարդասիրութ՟ զնշան կատարեալ բարեհաճութեանց ԻՒՐՈՅ, խոստանալով արձակապէս, թէ ցորչափ ժամանակս տեւելոց իցէ անդայթակղելի հաւատարմութիւն ազգի Հայոց առ Տէրութ՟ ՄԵՐ, ՄԵՐ ևս հարկ համարեսցուք ՄԵՔ, հոգ տանիլ անքուն մեծ բարեբախտութեանց նց՟ և անդորրութեանց։ Ի միտ առցէ ուրեմն ազգ Հայոց թէ որքան առաւել իցէ պարտաւորութիւն նորա Աստուծոյ իւրոյ. և զինչ կարօղ իցէ փոխարինել այնմ 'ի բարեպաշտելն իւրում քրիստոնէական հաւատարմութեամբ.

Մարգարէն Դաւիթ իսկ խորհրդածեալ երբեմն 'ի վերայ այսպիսի պարտաւորութեանց իւրոց Աստ՟ւ բարձրելոյ, տարակուսեալ ասէ. Զի՞նչ տաց տրիտուր Տեառն ընդ ամ՟ զոր ետ ինձ. (1). և անբաւականացեալ այնուիք, զայս խրախոյս անքատութեան իւրոյ յանձին բերեալ ձայն արկանէր. Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն Տեառն կարդացից. Զուխտս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա և 'ի գաւիթս տան Տեառն. (2)։ Իսկ արդ՝ զինչ մեք այժմ ձնշեալքս 'ի դարուց ժամանակաց կարողասցուք փոխարինել այնքան առ մեզ սքանչելի խնամակալութեանց Աստուծոյ. բայց թէ միայն ամենեքեան 'ի վեր յերկինս զձեռս համբարձեալ, կարդասցուք ընդ Մարգարէին զանուն Տեառն Աստուծոյ մերոյ, և ամենաբարեպաշտ երկրպագութեամբ Աթոռոյ փառաց Մեծութեան նորա տաց 'ի գաւիթս Տաճարի սրբութեան նորա, 'ի ձայն ցնծութեան խոստովանութեան

բղ-

(1) Սաղմ. ճժե. 12.
(2) Անդ. . . 13, 14.

զբարբառ բարձրացուցանել, զողորմութիւնս մեր հրատարակել, աղաղակել և ասել. Պարծանք զօրութեանց նոցա դու ես Տէր, և 'ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր. (1) այժմ և միշտ։ Եւ զոյգ ը̄ սմին մերամատուցանելով զաղերս ամենակալ տէրութեան նորա, աղօթել միաձայն։ Տէր կեցո՛ զթագաւորն և լուր մեզ յաւուր յորում կարդասցուք առ քեզ. (2)

Օ պարտաւորութիւն մեր Օծելոյն Ամ̃ թագաւորի և ԿԱՅՍԵՐ ամենայն Ռուսաց՝ ոչ միայն զհպատակականն որում պարտաւորին 'ի հպատակի ամ̃ հպատակք թագաւորի, այլ և զյատկականն որով մեք այժմ գտանիմք պարտաւորեալ առանձնական յատուկ պարտաւորութեամբ։

Թէպէտ և իցէ թերևս թուեցեալ ձեզ զոր լսէք յինէն. քաւ, մի՛ լիցի զինէն շօշափումն 'ի միտս ձեր զոյգն իցէ կարծեաց և մի՛ ընդու, զի զարժանն իմ 'ի մասին հօտին յանձնեցելոյ իմում հովուութեան՝ զգամ ես, և զպարտաւորութիւն իմ ձեզ առաջի Աստուածոյն մերոյ Ամ̃՝ ճանաչեմ բաւականութեամբ չափո իւրով խոկութեամբ։ Եւ չէք յիս կարծիք, թէ ոչ անդստին դուք իսկ ծանուցեալ վաղուց, ձեզին այդ վկայեսջիք ինձ յայժմիկ, թէ սակս ձեր կամ կեցուցանել երբեմն՝ զարման մնաց ուրուք կարգեալ էցեմ իւիք մեծի կամ փոքու ամենեցուն ձեր։

Այլ զի ծանր են մեզ՝ և ծանրագոյն ամօթ քան զչափ պարտաւորութիւնք մեր թագաւորի մերոյ և ԻՆՔՆԱԿԱԼԻ ամ̃ Ռուսաց, լուարուք ինձ ուշաւ՝ զրեցելումն, զիմոյ նկարագրէ։ Ներքոյ հովհակալու՝ պարտաւոր առնէ զԱմ̃ Ապարէն զմեծ ածէք, և զի՛ք 'ի կեղծ հովհաց ձերում ընտրութեանց։ Եթէ հովհակալու բերան արարածոց պարտաւոր առնէ զԱմ̃ զորարիցն իւր, բերան տիեզերական ԹԱԳԱՒՈՐԻ հզօր և հեզ՝ բարձր և խոնարհ Օգոստափառ ԻՆՔՆԱԿԱԼԻ ամենայն Ռուսաց՝ դա՛ք ինձ տա՛ք զբերան ձեր՝ որ՛ այն որ այդոք յաւիտենական ծանր ծանր պարտաւորութեամբ ոչ պարտաւորեսցէ զազգ մեր Քրիստոնէից՝ հեղաձայն բազմաձայն բարբառով հրատարակելովն զհովհակալութ իւր

(1) Սաղմ. ՁԸ. 18.
(2) Սաղմ. ԺԹ. 10.

ևր զեւրոց հպատակաց: Իսկ զի՞նչ համամտութիւն՝ այնմ մեզ յանդիման ունել զորեայն 'ի վեր քան զբան պարտաւորութեանցն մերոց զերջանիկ, զի ոչ միայն ձայնիւ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ամենապատիւ բարբառոյ, այլ և բարձր Կառավարական Սենատոյն ստորագրութեամբ կենդանագրեալ զնոյն անմահ իմն թղթովք, կանգնէ արձան պարծանաց տիրասէր հպատակութեան Հայկազանց 'ի յիշատակ յաւիտենից: Եւ ոչ միայն պարծանաց, այլ և արձան հաստատ յուսոյ նոցին յազգս յազգաց:

Իսկ ապա ուրախութիւն մեր այս՝ անդրանեացէ զմեզ 'ի տգիտանալն մեր խոկալի ծառայութեանց մերոց պարտաւորութեանց. այլ կարգեսցի պահակաւոր և փառաւոր յայնժամ, յորժամ ծանուցեալ զարժանն մեր առ սոյն, փութասցուք կարեւորքն մեզ յարգել միշտ հաւատարմութեամբ ընդ երկնաշահ քանքարացն: Այն զմտօք ձեր պահանեսցին զարհաբանք 'ի ծանուցեալ ծառայութեանց անտի՝ զի փորձ կրթութեան քաջալերձ է, թէ՝ ծանուցք առ հասարակ՝ անծանօթից, թեթև և զեւրազոյն իմն համարեսցին ծանօթից:

Զանր ծանր պարտաւորութիւք հարազատ հպատակութեան՝ չե՞ն ինչ ձեզ անծանօթ, գոլով ազգի ձերոյ ընդարձակ և բնական՝ մածեալ միացեալ յարեւն նոցին և յոսկր: Հաւատապէս ուրեմն պատրաստեսջիք զանձինս 'ի սոյն ասպարէզ ընդյառաջ ելեալ ձեզ, քաջալերեցարուք միաբան առ հասարակ հարք և որդիք, ծերք և տղայք, և զձայն ցնծութեան ուրախութեան ձեր տարածեսջիք յազգս ձեր՝ զի ձեր է յաղթանակն, և զաւար ԿԱՅՍԵՐԱԿԱՆ մշտնջենաւոր ողորմութեանց հարուստ վայելչութեամբ ժառանգեսջիք յայժմէ հետէ դուք և որդիք որդւոց ձերոց յազգս յաւիտենից: Իսրախայս ձեզ լուարուք զաւետարանականն: [illegible] (1). Այն զարհուրեցուսցէն զձեզ անպարտելի հզօրեղութիւնք Ռուսական ԻՆՔՆԱԿԱԼԻ՝ զի ողորմութիւք Նորա ձեզ թանձրացեսցին գիւրաւ 'ի հզօրանալն ձեր 'ի ձեռաց՝ ազգակայն քաղցր և անուրժ պարզ և ան-

կեղ

(1) Մարկ. ժբ. 12.

կեղծաւոր հաւատարմութեան ։ Արդարութիւն և իրաւունք հիմունք հաստատութեան Աթոռոյ Թագաւորութեանց՝ քաջ ճանաչողս ձեզ կացուցին յաւիտեան յանդիման աչաւոր մեծութե̅ ՆՈՐԱ , ցորչափ ժամանակս գտցին նոցա սատարք յատուկքն ձեր վկայեալք 'ի Նորին Մեծութե̅ ընտրութե̅ բարւոյ և չարի՝ վնասուց և օգտակարաց , գիտելն զգլխն բարեբար հոգացողութեանց Տէրութեան , և ունելն զանսայթաք հաւատարմութե̅ յարատև ։ Եւ մի՛ բնաւ անցցէ առ այս ե̅ միտս ձեր երկմտութե̅ , զի և ոչ ԻՆՔԻՆ իսկ Օծեալն յԱստուծոյ ԿԱՅՍՐՆ Աստուածագութ՝ առնուցէ երբէք զերեսն իւր ։

Խոստանայ ՆԱ 'ի կալն ձեր 'ի նոսին անդրդուելի , լինել ձեզ անքուն պաշտպան , և հոգացող մե̅ բարեբախտութեանց ձերոց և անդորրութեանց ։ Եւ յորդեսցէ նա զշարքս բանից բերանոյ ԻՒՐՈՅ՝ որպէս վասն ողորմութեանց ԻՒՐՈՑ, նոյնպէս և վասն մեծութեան փառաց Ամբարձեալ ԱՆՁԻՆ և ամենապատիւ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ ։

Տուք ուրեմն բերանալիր գոհութի̅ Այ զփառս , և բարձր տարածեալ ձեռս 'ի բարձրութե̅ իւրում և 'ի խոնարհութեան , որ անքուն պահապանն է ԻՒՐ , աղաղակեսցուք առ նա և մեք ե̅ ձեզ բազմատարած հայցմամբ . Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւոր, 'ի փրկութեան մերում ցնծասցէ ՆԱ յոյժ (1).

Տուք և զօրհնութիւնս Օծելոյ նորա անքուն պաշտպանի ձերոյ և հզօրաձեռն այցելուի Հայաստան աշխարհի ։ Օրհնեսցէք զՆա 'ի բարեհաճութեան Նորա . օրհնեսցէք զՆա 'ի մարդասիրութեան և 'ի բարեգութ խնամակալութե̅ Նորա . օրհնեսցէք զՆա 'ի զօրութե̅ և 'ի կարողութե̅ Նորա . և միաբան ամենեքեան բոլորեալ ջերմեռանդութեամբ յանուն Այ ամենակալի և ամենաբարեկամի խրախոյս բարձեալ առ ԿԱՅՍՐ ամենողորմած , զմարդասիրական սորմնեսցուք . [illegible] (2).

Խմա-

(1) Սաղմ. Ի. 1.
(2) Սաղմ. Ի. 8.

Իմաստութիւն մեզ եղիցի՝ ճանաչելն մեր զպարտաւորութիւն մեր անձանց և հայրենեաց կամ հասարակութեան համազգեաց։ Անձանց, որում պարտաւոր եմք որպէս աւանդապահ Արարչի մերում, պահել անվթարն զմարմին և զհոգին ըստ պատուիրանին Տեառն․ Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո․(1)։ Իսկ զի չափ կատարեալ սիրոյ ընկերին, գտցի ուղղահայեաց՝ սիրով սեպհական անձին։ Հայրենեաց, զի տիրական նշան արժանաւորութեանց ամենայն մարդկան՝ այն իսկ է․ որպէս և Առաքեալն քարոզէ․ Ոչ էք այսուհետեւ օտարք եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց, որք ՚ի հնագոյնդարութեան կոչեցեն (2)։ Եւ զի և անհարազատքն հայրենեաց՝ հեղինակ դատապարտութեանց յԱրարչէն իսկ՝ աւանդեալ դատապարտեալք, զրկեցան յամ մեծ վայելչութեանց նախահարքն մեր Ադամ և Եւայ։ Համազգեաց, զի սէր անձանց ՚ի նմին իսկ կայանան․ առ որ և Քրիստոս աւետարանէր․ Ամ թագաւորութիւն բաժանեալ յանձն, աւերի․ և տուն բաժանեալ յանձին կործանի․(3)։ Եւ աւետարանիչն Յովհաննէս ասէ։ Աստուած զանձն իւր եդ վասն մեր, և մեք վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս․(4)։

Ապաքէն թողեալ զնախնեացն մերոց վնասն անձնական ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ, և զհայրենեացն ՚ի դարուց ժամանակաց քակտումն և կործանումն․ և հասարակութեան համազգեաց հետախաղաղ կորուստ ընկճեալ պարուց առաջնոց, միջնոց և վերջնոց, զորոց՝ ողք և կեն մնայացեալ անժամանց հայրենեաց՝ և մնմունք երևելի երևելի բազմահոյլ վանորէից և եկեղեցեաց զրկելոց յօրհնաբանութեանց Աստ խորհանց՝ առաւել .քան զձայն ձկանց այդու բարձրացեալ ի մեծ աղաղակ հայրենեաց Հայաստանի, .քերեն աւանիկ զԱծուԹեն Աթոռոյ անդուլ հեծութեամբ։

Ձեզ ասեմ, ձեզ ասեմ, որք լսէքդ և տեսանէք զպարզահաւոր ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ սիրալի հեզարանութիւն ՚ի ջատագովել ձերոց առաքինութեանց Իւրով լսկական մատամք

(1) Մատթ․ ԻԲ․ 39․
(2) Առ․ Եփես․ Բ․ 4․
(3) Ղուկ․ ԺԱ․ 17․
(4) Ա․ Յովհ․ Գ․ 16․

տամբ անձինք զրոշմեալ, զոր լսի զկեանս ձեր և զաւուրս սա-
կաւ ամաց ձերոց որոնեցջիք, և աչս վառեսցին բորբոքեսցին
անդրէն յանձինս ձեր նկրտեալ անշիջանելի հրդեհք ցաւոց.
Թէ զկամս սովորելի են զանեալ առ ձեզ յամենայնի հար-
ուածք մարդախողխող անխնայութեանց չարաչար կշտամբանաց: Որո-
նեցջիք զկեանս ձեր և զհոգիս, և լուասցեն զերեսս ձեր ար-
տասուք աղերսացեալք 'ի ձերոց աչաց:

Արտասուք զառն՝ յորդեալք առ յիշատակի զառնութեան
անցելոց, զորս Աբրայն Խէլի ողորմագինս կանխաւ յառաջ
ողբաձայնէր. Պատերազմ և աւեր մերձակայն զոհ՝ զպատերազմն ուր ընկեցին ընդ արեգա-
կամբ. և ահա արտասուք զպատերազմողացն, և ոչ ոք էր որ մխիթարէր զնա. և 'ի չեւոյ զպատերա-
զմացն եղանակէ (1). Եւ արտասուք քաղցր՝ զի նախախնամութեամբ Այն
յաւիտենից ԹԱԳԱՒՈՐ ՄԵԾ ԿԱՅՍՐ տեղեկա-
կալ յայտնեալ ձեզ 'ի հասեալ յայսմիկ ժամանակի այցելու
հզօրաձեռն, ընդ ձեռն 'ի ձեռանն՝ սնի զմեծ ողորմութիւն իւր, զոր
կարկառեալ յերեսս ձեր քաղցրագութ մարդասիրութեամբ՝
խոստանայ աչս սրբել զարտասուս ձեր, մխիթարել զձեզ, ան-
դորրացուցանել զձեզ և յամս ժամանակս հաւատարիմ հպա-
տակութեանց ձերոց ապահովացուցանել զձեզ և զազգատոհմս
ձեր 'ի զրկարարութեանց անալի չարաչար բռնակալութեանց
ձերոց նեղչաց:

Իսկ արդ յառաջ տարցի, և զարձեալ ասեմ. Յաւել լի-
ցին ձեզ աւուրքն առաջինք, խնդացարուք զամս յաղագս մինչև
յաղագս. և փոխեսցին ձեզ աւուրք ձեր, և ամք կենաց ձերոց վա-
յելչացեալ ձեզ և հայրենեաց ձերոց յայսմհետէ:

Ամ անվթար լինիցիք զշնորհաց այսորիկ որք առաւե-
լոն ձեզ ՟ի շնորհաց Այ: Սէր անձանց և անմոռանալի հա-
մազգեաց և հայրենեաց՝ եղիցի անմեղութն ձեր մտաց և կա-
մաց զատոխարակ անմնադրդ. Գրեալ է. Պատիւ Թագաւորի զի-
րաւունս սիրէ (2). այլ 'ի սէր խրատուց զարթուսցեն շարժեսցեն
զպատիւ Թագաւորի գործք ձեր աղդականս հոգւոյն ընթացակ-
ցեալ

(1) Ողբ. Գ. 1.
(2) Սաղմ. ՂԷ. 4.

ցեալ ձերոց կենաց։ Ո՛չ ես, այլ հրաշալին Պօղոս զայն առաջի առնէ. Կամի՞ս չերկնչել յիշխանութենէ անտի, զբարիս գործեա՛ և ընկալցիս զգովեստ 'ի նմանէ. Ապա եթէ զչար գործիցես, երկի՛ր, զի Այ սպասաւոր է, վրէժխնդիր 'ի բարկութեան այնմ, որ զչարն գործիցէ (1).

Իսկ ու՞ր ընաւ 'ի բանս ունկնդիրք դեգերիլ, հայեցարո՛ւք ահա 'ի հրապարակս ձեր համախումբ զուարձացեալ և անխակառոյց ուշադիր ։ Զի՞նչ այդչափ խանդակաթ առ հասարակ անխորժէք լսել. Թերևս զգուշութիւն ԻՐՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՆ վասն բարւոք գործոց ձերոց, այո՛ այդպէս պանծալի են գործք բարիք՝ մինչև զօրէն ոչ միայն զԹագաւորս և զԿԱՅՍԵՐՍ ԻՆՔՆԱԿԱԼՍ, այլ և զԹագաւորն Թագաւորաց զԱծ կարգել ինքեանց ջատագով, որպէս ընթեռնումք յաւետարանի անդ։ Ա՛ղէ ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո (2).

Զօրէն նաև զհզօրն և զտկարն բարեգործ՝ սիգաձեմ անմեհեր միջամուխ 'ի լոյս՝ գերապանծ հանդիսացուցանել. որպէս և բան Տեառն հաստատէ։ Ամենայն որ առնէ զճշմարտութիւն, գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա թէ Այ գործեցան (3).

Սէր անձանց, սէր համազգեաց, սէր հայրենեաց յաւէրժական պսակ փառաց հիւսեսցեն ինքեանց յաւէրժական նախանձաւորութեամբ լաւագունից շնորհաց։ Քաղցրանման ձեզ բարբառք ջատագովութեց զեղեալք յականջս ձեր յօրհնաբանեալ բերանոյ Օծելոյն Աստուծոյ՝ ըստ շնորհաց ամենառատ բարութեանց հոգւոյ ՆՈՐԻՆ. քաղցրասցին ձեզ առաւել ևս յայսմհետէ ջանք մշտնջենապէս արժանադատ յառաջատութեց յամ՝ գործս և 'ի կամս ձեր համապատշաճեալ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ։ Մի՛ և մի՛ իւիք տկարացուսցեն երբեք զմիտս ձեր հրապոյրք բանիցն հասարակեալ. Ած բարձր և Թագաւոր հեռակայ։ Այլ Թագաւորեսցէն 'ի

վերայ

(1) Հռոմ. ԺԳ. 3, 4.
(2) Մատ. ԻԵ. 23.
(3) Յովհ. Գ. 21.

վերայ կամաց և խորհրդոց ձերոց յաւէրժ՝ անանցանելի պատ-
գամբ բանիցն Աստուծոյ. Լեր հաւատարիմ մինչև 'ի մահ, և տաց քեզ զպսակն
կենաց. (1). Այսք զքրիստոնէականն անշուշտ վկայութի, զորոց բա-
րեաց նա ինքն է գործաւոր և գործակից. և նովաւ հզօրացեալ
ակարք՝ յառաջադէմ անձամբ անձին ախոյեան գալ առ լոյս։
Նոյն բարձրութիւն է Այ և նոյն հեռաւորութի Թագա-
ւորի. բայց դուք բարեբախտ եղէք ունիլ այնմ ցորդ զիւրկն
փորձ։ Ո՛վ հզեաց առ ձեզ զառաջինն զմեծ զողորմութի յաւի-
տենական փառացն Այ արժանաւոր ԻՆՔՆԱԿԱԼԻ
ԿԱՅՍԵՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ առաջնոյ, Որոյ
ընկալայք դուք հանդիսադիր ձերոց աշխատական պարգևանաց զա-
ւանձնաշնորհութեանն Հրովարտակ. յամի 1813. 'ի Սեպտեմ-
բերի 15։ Ո՛վ այժմ ընդ հարկաւ արար զմեծութի ահեղ և հզօր
ՏԻԵԶԵՐԱԿԱԼԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ առաջ-
նոյ, զինքանիլ առ ձեզ անյիշատակ առատացեալ Ամենողորմած մար-
դասիրութ. որով այժմ ահա գտանէք լցեալ լիացեալ ներկայ և
ապառնի յուսով ցանկացեալ բարութեանց. Այ որ մերձ է ամե-
նեցուն և ոչ ուրեք (2), զորոց բարեաց որպէս է գործաւոր
և գործակից, այնպէս և վկայ հաւատարիմ, և ներգործօղ ա-
մենակարօղ որով և 'ի վեր քան զհասարակացն բնութի զգա-
յութեանց ազդէ յամ հեռաւորս և 'ի մերձաւորս Աստուած
իւր տեսանել և լսել և զգալ միշտ, որոյ արդ ինքնին դուք
կարէք լինել քաջ վկայք ձեզ և ամենեցուն, և ընդ ձեզ միա-
ձայն բանն Արքայական. Յայտնեա առաջի Տեառն զճանապարհս քո, և յու-
սա 'ի նա։ Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւն քո և զիրաւունս քո
որպէս զօր հասարակ (3).

Ա՛հ որք 'ի բաց խլեցէք 'ի ձէնջ զամենայն զգործս ձեր
վայելչացեալս բանաւոր ընտրութեանց ձերոց և արժանաւոր
հպատակութեց. զի Թէպէտ և եղիցի երբեմն ը օրինակի ձա-
ռայութեց լուսոյ արեգական է ամպովք կոյր միջարկեալ
մառ-

(1) Յայտն. Բ. 10.
(2) Գործ. ԺԷ. 27.
(3) Սաղմ. ԼԶ. 5, 6.

մառախլապատ իմն թաքչիլ ընդ ծածկութիւն, այլ դարձեալ ցոլացուցէ ժամանակին զնշոյլս ումանս ճառագայթից նորին՝ որք դարձուցին առ ձեզ զհայեցողութիւնս բարերար ակնարկութեց ամենայոյս Խնամակալի ձեր և մեր հասարակութեան հպատակաց իւրոց Մեծ Տիեզերակալի և ԻՆՔՆԱԿԱԼԻ ամենայն Ռուսաց։

Պարտաւորութիւն ձեր անձանց ձերոց և համազգեաց և Հայրենեաց՝ պահանջէ միայն օրինակ տալ զանձինս ձեր որդւոց ձերոց, և կրթել զնոսին այնպէս, զի յազգս ազգաց հօր-որդւոց գտցին հեղինակք ամենաջերմեռանդ պարզ և անկեղծաւոր հաւատարիմ հպատակութեց, և այր երջանկական բարեմասնութեանց նոցին պահանջէ 'ի ձէնջ և յամենայն ազգատոհմութեց ձերոց լինել միշտ անլի ամենապատրաստ ի կատարել զամենապատուելի կամս ԻՒՐՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ վասն ազգական արժանաւորութեց ձերոց և հաւատարիմ հպատակութեանց։

Հաւատարիմ են միշտ բանք ԹԱԳԱՒՈՐԻ և ԿԱՅՍԵՐ, և լիցին ձեզ հաւատարիմ բանք իմ այսոքիկ քարոզեալ ձեզ բանիւ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ. թէ պտուղք հաւատարմութեանց քաղցրացուսցեն ձեզ յաւիտեան զկեանս ձեր և ազգատոհմի ձերոյ՝ առաւել քան որքան զօրեսցեն այժմ հասանել միտք ձեր և խորհուրդք։

Եւ 'ի վերայ այսր ամի՝ միաբան հաւատովք զծունր խոնարհեցուցեալ Այ բարձրելոյ, խնդրեսցուք զօգնականութիւն նր Ամենողորմած ԹԱԳԱՒՈՐԻ մերում և ԿԱՅՍԵՐ ԻՆՔՆԱԿԱԼԻ, և աղաչեսցուք զԹուին նր, որպէս զի օր ըստ օրէ բարձրացուսցէ 'ի վր մեր զշնորհս անսահման մարդասիրութեց և Աստուածաբար խնամակալութեց իւր և Օծելոյ իւրոյ, որոց Արարչական և արարածական պատիւ և փառք այժմ, և յաւիտեան. Ամէն.

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ